

ՊԱՏՄԱԿԱՆ

Գ Ո Ղ Գ Ո Թ Ա

ԹՐԲԱՀԱՅ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐ ՀՕՏԻՆ

ԱՂԵՏԱԼԻ 1915 ՏԱՐԻԻՆ

Կազմեց՝

Թ Է Ո Ւ Ի Կ

Կառուց որ Ս. Անապատ ալ կը կոչուի՝ ունի զարգացումը եկեղեցի, կառուցեալ յանուն Ս. Աստուածածնայ, Յովհ. Կարապետի եւ Ստեփաննոսի: Մինչև Ազգաի տարին, Կառուցի վանահայրական տեղապահութիւնը կը վարէր:

Եղիազար Մ. Վրդ. Պետրոսեան.— Ծնած է 1832ին Արզնիւի (Աղթաճար), աշխարհական անուամբ նոյն, ուսած Կառուց՝ ուր 1863ին ձեռնադր. Մարգար Եպսկ. Շատախցեանէ: 30 տարի լուսարարապետ, 6 տարի վանական դործոց վերատեսուչ եւ 2 տարի կալուածական տեսուչ անդ: 1889ին ծայրագնութեան աստիճան ստացած Յովսէփ Եպսկ. Ռչտունիէ: 1885-7 փոխվանահայր եւ 1911էն ի վեր տեղապահ: 1907ին 5 ամիս բանտարկուած է Վան, իբր այն թէ նոյն մենատանը թաղստոց բրած էր Հայ յեղափոխականաց: Ի վարձ իր երկարամեայ բարեօք պաշտօնավարութեան, 1910ին Մատթէոս Բ. Կաթողիկոսէ արտօնութիւն ստացած էր լանջախաչ կրելու:

Իրեն վիճակուեցաւ, ամսո՞ւ, խաչերուն ամենէն ծանրը կրել 1915ի դարնան: Իր 83 տարիններուն եւ նահապետական քթան մօրուքին իսկ չէ խնայած անգութ կաթաղանք տաճկին:

Պօղոս Վրդ. Յակոբեան եւ Ներսէս Սարկաւազ նոյնպէս նահատակ:

Նոյն Միարանութեանէն հետեւեալ երեքը միայն զերծ կը մնան Ազգալէն.

Սահակ Վրդ. Աստուեան.— Ծն. 1874ին եւ ձեռնադր. 1903ին, այժմ Պաքուպա:

Պետրոս Վրդ. Շահինեան.— Ծն. 1849ին եւ ձեռնադր. 1876ին, այժմ Երեւանի չրջան:

Ստեփան Մ. Վրդ. Աղազատեան.— Ծն. 1852ին եւ ձեռնադր. 1876ին, այժմ Պաղտատ-Պաքուպա:

Միարանութեան զոհերուն չարքին են դարձեալ հետեւեալ 2 վարդապետները: Իսկ անոնցմէ անմիջապէս վերջ յիշուած 15 քահանաներէն (որոնք Կառուցի ենթակայ 8 հայաբնակ գիւղերուն ծխառէրեր էին), մէկը միայն վերապրող է, մին՝ ճամբու տաճանքի շտակալով վախճանած, 13 հօգին նահատակ:

Պետրոս Վարդապետ Վազարեան.— Ծնած 1883-ին Բերկրի, աշխարհական անուամբ Կարապետ, ուսած անդ եւ Լիմ Անապատ, 1911-ին Աղազատեան եպիսկոպոսէ սարկաւազ, յաջորդ տարին ալ վարդապետ ձեռ-

նադրուած ի կտուց՝ Յովսէփ Ռչտունի եղբակոյրսէ : Լուսարար եւ վերահայու վանական զործոց :

Ստեփաննոս վարդապետ Տէր-Յովհաննէսեան .— Ծնած 1886ին Ալիւր գիւղ, աշխարհական անուամբ Նիկողոս, ուսած անդ եւ կտուց, 1914-ին ձեռնադրուած Յովսէփ եղբակոյրսէ : Լուսարար եւ վերահայու :

Ահաւասիկ վիճակին 8 հալարնակ զիւղերը, եկեղեցիներն ու երկցները :

1. ԱԼԻԻՐ կամ ԱԼՈՒՐ (Ալիւր) .— Գիւղէս 10 վայրկեան հեռու է «Սուրբ Աստուածածին» վանքը : Իր 343 անուոր բնակչութիւնը քաջարար զիւղացի զիմաղրել եւ պատուաւոր մեծնել : Եկեղեցիներն էին Սուրբ Լուսաւորիչ եւ Սուրբ Սահիանոս (վերջին 1911-ին կառուցուած), ուր կը պաշտօնաւարէին :

Կարապետ Քահանայ Թովսիկեան .— Ծնած 1834-ին, բնիկ, աշխարհական անուամբ Մուրաւ, ուսած անդ, 1879-ին ձեռնադրուած Յովսէփ Ռչտունի սրբազանէ : Նահատակ :

Յովհաննէս Քահանայ Տէր-Յովհաննէսեան .— Ծնած 1849-ին, բնիկ, աշխարհական անուամբ Բարսեղ, ուսած անդ, 1887-ին ձեռնադրուած նոյն սրբազանէն : Այրիացեալ : Նահատակ :

Սարգիս Քահանայ Տէր-Սարգիսեան .— Ծնած 1849-ին, բնիկ, աշխարհական անուամբ Եղիազար, 1891-ին ձեռնադրուած նոյն սրբազանէն :

Ստեփաննոս Քահանայ Բրուտեան .— Ծնած 1881-ին, բնիկ, աշխարհական անուամբ Մարգար, ուսած անդ, 1913ին ձեռնադրուած նոյն սրբազանէն :

2. ՄԱՐՄԵՏ .— Գիւղիս ժողովուրդն ալ զիմաղրութիւն փորձած է Ալիւրցիներուն պէս : Եկեղեցին Սուրբ Գէորգ՝ ուր կը պաշտօնաւարէին :

Յակոբ Քահանայ Տէր-Յակոբեան .— Ծնած է 1850-ին, բնիկ, աշխարհական անուամբ Գէորգ, ուսած անդ, 1893-ին ձեռնադրուած Գ. Ալեքսեան սրբազանէ ի Պէշիկթաշ (Պոլիս), ուր եւ Միջագիւղ պահ մը քահանայապետածէ վերջ՝ կը մեկնի ծննդավայր :

Մարտիրոս Քահանայ Կարապետեան .— Ծնած 1879-ին, բնիկ, աշխարհական անուամբ նոյն, ուսած անդ, 1897-ին ձեռնադրուած Յովսէփ Ռչտունի սրբազանէ :

Ներսէս Քահանայ Գալիքեան .— Ծնեալ 1872-ին, բնիկ, աշխարհական անուամբ նոյն, ուսած անդ, Մակդար զիւղի (Վան-Տոսպ) Սուրբ Գէորգ եկեղեցւոյն վրայ 1892-ին ձեռնադրուած նոյն սրբազանէն, յետոյ ծննդավայրը դարձած :

3. ԽԱԼԵՆՅ կամ ՀԱԼԵՆՅ .— Գիւղէս կէս ժամ հեռու է «Բարձրադնոց Սուրբ Աստուածածին» եկեղեցին (ուխտատեղի), իսկ սրբավայրը՝ Սուրբ Կիրակոս, ուր կը պաշտօնաւարէին :

Արաքսիա Քահանայ Տէր-Յովհաննէսեան .— Ծնած 1834-ին, բնիկ, աշխարհական անուամբ նոյն, ուսած անդ, 1889-ին ձեռնադրուած Յովսէփ Ռչտունի սրբազանէ :

Կարապետ Քահանայ Տէր-Գեորգեան .— Ծնած 1876-ին, բնիկ, աշխարհական անուամբ Սիմոն, ուսած անդ, ուսուցիչ եւ զպիր, ձեռնադրուած նոյն սրբազանէն : Այրիացեալ :

4. ՏԼՐԱՇԷՆայ եկեղեցին էր Սուրբ Աստուածածին (յաջորդ չորս զիւղերունն ալ համանուն) ուր կը պաշտօնաւարէր :

Սիմոն Քահանայ Խաչատուրեան .— Ծնած 1842-ին, բնիկ, աշխարհա-

կան անուամբ նոյն, ուսած անդ, 1880-ին ձեռնադրուած Յովսէփ Ռչտունի սրբազանէ: Կը հովուէր Քէօփրիւքէօյի ժողովուրդն ալ:

5. ԾԻԿՐԱՇԷՆ. — Գիւղիս երէցներէն էին

Յակոբ Քահանայ Կիրակոսեան. — Ծնած 1857-ին Լէզկ (Վարադ), աշխարհական անուամբ նոյն, ուսած անդ, ուսուցիչ, 1887-ին ձեռնադրուած Յովսէփ Ռչտունի սրբազանէ: Երկար տարադուրութիւններէ վերջ՝ վստիճանած ի Պաղտատ:

Սահակ Քահանայ Մարգարեան. — Ծնած 1869-ին, բնիկ, աշխարհական անուամբ նոյն, ուսած անդ, 1912-ին ձեռնադրուած նոյն սրբազանէն:

6. ԱՆՆԱՎԱՆՔ կամ ԱՆԱՆԱՎԱՆՔ, Ամենաչատ եւ Ծակդար գիւղերուն մէջտեղ՝ Մարմետ գետին մօտ գտնուող գիւղիս երէցն էր

Յովակիմ Քահանայ Խաչատուրեան. — Ծնած 1872-ին, բնիկ, աշխարհական անուամբ Թովմաս, ուսած անդ, 1902-ին ձեռնադրուած Յովսէփ Ռչտունի սրբազանէ: Այրիացեալ: Վերապրող, այժմ Պաքուպա:

7. ԱՄԵՆԱՇԱՏ, գեղեցկագիր եւ այգեւէտ գիւղակ որ կարծես կը հակաէ իր անունը, բնակչութիւնն ըլլալով 100 անձ: Երէցն էր

Սիմոն Քահանայ Եղիազարեան. — Ծնած 1870-ին, բնիկ, աշխարհական անուամբ նոյն, ուսած Կառուց, դպիր, 1898-ին ձեռնադրուած Յովսէփ Ռչտունի սրբազանէ:

8. ԵԿՄԱԼ, նոյնպէս սակաւարձակ գիւղ՝ որուն երէցն էր

Գրիգոր Քահանայ Յակոբեան. — Ծնած 1880-ին Ծիկրաշէն, աշխարհական անուամբ նոյն, ուսած անդ, 17 Ապրիլ 1913-ին ձեռնադրուած Յովսէփ Ռչտունի սրբազանէ: Եկմպէն քառորդ ժամ հեռու է Սուրբ Գէորդ անուն սրբափայլ մըն ալ, կէս դարէ ի վեր լքուն, իբր ուխտատեղի միայն ծառայող:

9. ՔԷՓՓՐԻԻՔԷՓՅ. — Վերջինն է այս՝ Կառուց Անապատի թեմերուն, խոն բնակչութեամբ (անժամ եւ անհովիւ), որուն հոգևոր պէտքերը կը հոգար Տըրլաշէնի Տէր Սիմոնը:

✱

Եւ այսպէս, Վասպուրական աշխարհի մէջ ողջոյն՝ ո՛չ մէկ սրբութիւն մնաց, ո՛չ ալ սրբափայլ՝ որոնք զերծ մնային պղծութեան, ատրի ու անդումի մատնուելէ: Իսկ Աստուծոյ Տան ուխտեալ պաշտօնեաներ իրենց Սուրբ ժողովուրդին հետ շարժած՝ անցան նոր ժամանակներու Գողգոթաներէ, իրենց նահատակութեամբ արժանանալով անմահական Բարբրոնին:

... Պատերազմի վերջին տարին, Օսմանեան բանակին հետ Վան մտնող զեղապարծ Սարգիս Թիւթիւնճեան կը պատմէ մեզ, թէ Վանեցւոյ վերջին նահանջին՝ 1500 Հայեր ապաստաններ են Աղթամար եւ ամրաներով մնացեր են հոն ստիպտանջ, անձկագին սպասելով լաւագոյն օրերու եւ հարահատ ճարակելով տեղւոյն բովանդակ բուսականութիւնը. մինչ, տեղական կառավարութիւնը կարծելով որ անոնք ստուարաթիւ զինեալ ոյժ մը կը ներկայացնեն հոն, յարձակում չի փորձեր առ ահի: Ժողովուրդը սովէն ալիւս յուսահատութեան եզրը հասած՝ իր կացութիւնը կ'իմացնէ կառավարութեան, որ կը փութայ ամբողջը մէկէն Վան բերել եւ հաստատել ամալացած քաղաքին մէջ — Թուրք զինուորական իշխանութիւնը նոյն ատեններուն կեդրոնացած ըլլալով Այդեատան, որ քաղաքէն մէկուկէն ժամուան համարայ է: Երկարատեւ նժդեհութեան եւ զրկանաց հետեւանօք հիւժեւեղած Հայութեան այդ զանգուածն էր ահա որ դատապարտուեցաւ իր հայրենի կառուրին տակ վաշկատուն ապրելու եւ զրատի պէս դատելու, զինուորական իշխա-

նութեան կողմէ իրեն շնորհում(!) չոր հացի մը փոխարէն: Նոյն միջոցին, Թուրքիա յարաբերութեան մէջ ըլլալով Երեւանի նորակազմ Հանրապետութեան հետ, հոնիկ պարէն բերել կու տար Վան՝ ուղտերով: Եւ որովհետեւ ուղտապաններուն մէջ Հայեր ալ կային, ատոնք կասկածք կը հրաւիրեն Վանայ տիրանուն կուսակալ Հայտարի՝ որ չ'ուշանար Կեղրոնին զեկուցանել թէ տեղւոյն Հայերը զաղտնի կը յարաբերուէին Երեւանի հետ... Այս գրք-պարտութեամբ, անհրաժեշտ կը դառնար անոնց մտաբերութիւնը: Վան վերստին կը պարպուի, եւ ժողովուրդը նաւակներով Դատվան փոխադրուելէ վերջ՝ ճամբայ կը հանուի գէպի Տիգրանակերտ: Դեռատի Հայուհիներ նշաւակ կը դառնան ոստիկաններու խնէշութեանց: Տեղահան ժողովուրդն իր վերջին տքորտալայրը չհասած Զինագազարը կը կնքուի, որուն մէկ յօդուածին տրամադրութեան համեմատ՝ կը հրահանգուի բոլորին ալ վերադարձը:

Այդ դժնդակ երթուղարձի ատեն է որ հէք ժողովուրդը կը կոտորակուի կէս առ կէս՝ եղանակին խտտութենէն եւ հիւանդութեանց առթիւ դարձանի պակասէ, մինչեւ հեւասպառ ժամանումն ի Վան 20 Նոյեմբեր 1918-ին:

Կարաւանին մէջ նշմարուած է անսքեմ եւ գլխաբաց քահանայ մը ալիքներ, մարմինը տարօրինակէս կեղտոտ ցնցոտիներով ծածկած, որ գրք-պանի կաշնպատ Սաղմոսը ձեռքը՝ կը քաղէր ու կը քալէր քերմեղանդօրէն, բազմաշարժար այդ վիճակին մէջ իսկ չդադրելով ապաւինել Երկնաւորին գրուրեանը...

Ահա թէ ինչպէս ՀԱՅ ԿԴԵՐԸ գիտցաւ Քրիստոսի կրօնը բարձր պահել անըմբերելի տանջանքներու ատեն իսկ, աղօթքն ալ անպակաս ընել իր անարիւն շրթունքէն, անոր մէջ միայն որոնելով սփոփներու դերագոյնն ու անձաւորին:

ՈՒՐՄԻԱ ԵՒ ՍԱԼՄԱՍ

Թէեւ արտաքոյ Տաճկաստանի, բայց անոր սահմանակից, մանաւանդ Վանայ կրկին դաղթերուն հետ մեծ աղերս տնեցող Պարսկաստանի այս հոգամասերն ալ յիշատակել պատշաճ դատեցինք, համառօտակի ներկայացուցած ըլլալու համար հոն ապրող Հայոց եւ իրենց եկեղեցականներուն թափառական վիճակը Թուրանեան գրոհներու հետեւանօք, Ընդհանուր Պատերազմի սմբողջ տեւողութեան:

✱

1914-ի ձմրան, Ռուս բանակի նահանջի օրերուն, Հայ կամաւոր մը վազնիվազ կը հասնի Ուրմիոյ Հայոց առաջնորդարան, եւ Խորէն վարդապետ Տէր-Վարդանեանի կը հաղորդէ նահանջի այդ տխուր յուրը: Փոխանորդ Հայր Սուրբը (ծնեալ 1872, ձեռնադրեալ 1899) կացութեան ծանրութիւնը նկատի առնելով՝ կը փութայ զեկուցանել քաղաքին եւ շրջակայ գիւղերու Հայ ժողովրդեան, թէ միակ փրկութիւնը կը կայանար արագ փոխաւորի մէջ:

Ու կ'սկսի դաղթը գէպի ծուլքա՝ առաւել քան 30,000 հոգիի: Հոն երկու օր կը մնան եւ իրենց քաղցը կը յաղեցնեն՝ տեղացի ազգակիցներէ յօ-ժարափոյթ բաշխուած 30 սալլ հացով: Այնուհետեւ կը ցրուին Կոնստանտնուպոլիս:

Քսանը եօթը փահանայ (Տէջերնուն ինը Համատան, ճամբան եւ Պաղ-

տառ վախճանած, իսկ Սարգստի երէցներէն Յուսիկ Քաճանայ, երկար զաղթերէ հոք, տարապրութեան իր վերջին կայանը՝ Պաքուպա վախճանած), և հետեւեալ երեք վարդապետները.—

Յովհաննէս Վարդապետ Յակոբեան.— Ծնեալ 1850, ձեռնադրեալ 1885, Աղթամարի միաբան, այժմ ի Պաքուպա:

Սահակ Վարդապետ Աստմեան եւ Վահրամ Վարդապետ Կանաչեան՝ որոնց մասին խօսեցանք Վանայ բաժնին մէջ:

Իսկ Ուրմիա մեացող երկու քաճանայ և մօտէնեօս մը կը նահատակուին: Ասոնք են

Պօղոս և Ներսէս Քահանաները, նաև

Հայր Դաւիթ, Հայ կաթողիկ (ըստ վկայութեան Աղբալի վերապրող հովիւ Վահրամ Վարդապետ Կանաչեանի):

Նոյնպէ՛, Ուրմիայէն չորս ժամ հեռու՝ դէպ հիւսիս, Շումպուլ-Ապատ գիւղի Ասորի երէց Կաշա Խարայէլ 5 Դեկտեմբեր 1914-ին կ'ունենայ և՛ զերական վախճան: Նախ մօրուքը կը բռնկցնեն, յետոյ կ'սպաննեն անլուր չարչարանքներով: Կաշա Խարայէլի վկայակից և փախուստի ատենին ձախողութեան մատնուող 23 Հայեր՝ որոնց չարքին է մահտեսի Աղիդեան իր երկու որդւոց հետ. ջարդարարք այդ խեղճերուն տկանջները կտրելով՝ բռնի կերցուցած են իրենց, և, անդր քան զվայրենութիւն նոյն հաճոյքին յագեցնելէ հոք՝ ամէնքնին մէկէն սուրէ կ'անցունեն:

Ուրմիոյ մէջ կը ձերբակալուին Ֆրանսացի երեք երէցներ ևս, նաև Ասորի կղեր Կաշա Խամպապա, որոնք Վան արքեպիսկոպոստի տակ՝ կը տարուին Մուսուլ և զերմ կը մնան անճիտումէ, շնորհիւ վերահաս Զինադադարին: Ասոնք կը մեկնին Պաղտատ և տեղւոյն գաղթական Հայութեան կը պատմեն տեղի ունեցած սոսկալի նախճիրները: Վերոյիշեալ Ուրմիացի նահատակ երկու քաճանաներէն զատ, ունինք Ուրմիացի Գրիգոր Քահանան ալ, քաջ նշանաւոր այրուծի, խաշ ի ձեռին մասնակցած խանաւորի արշաւանքներուն և 1917-ին նահատակուած աւազակներու ձեռամբ:

Յովհաննէս Քահանայ Գասպարեանը, 65 տարու, վերապրող, նախ ի Պաղտատ, յետոյ ի Պաքուպա:

Սահակ Քահանայ Պապանեանը, 90 տարու, վերապրող, այժմ ի Համատան:

✱

Այս տեղեկութիւնները քաղուած են Ուրմիարեակ Օննիկ Աւետիսեանի (Վանցի) որ բոլոր գաղթերուն ու կոխներուն մասնակցած՝ հիմա Պոլիս կը գտնուի:

3.— ԲԱՂԵՇ (ՊԻԹԼԻՍ)

Տիրապետներու, Կարնոյ եւ Վանայ մէջտեղ տարածուող նաճանգիս կուսակալանիստ վայրն է համանուն քաղաքը, Աղձնեաց Սարնոյ Զոր գաւառի մէջ, վաճառաշահ, պտղաւէտ, օդառուն եւ առատարուի աղբիւրներով անւանի, կառուցուած՝ մասամբ լեռներու վրայ եւ մասամբ ձորերու մէջ, որոնք նկարչազեղ գիրք մը տուած են իրեն եւ որոնց մէջէն կը վազեն Ամպայ, Աւելաու եւ Խոսրովու Զուր վտակները. ասոնք քաղաքին մէջ միանալով՝ կը ձեւացնեն Ամպի-Պիթլիս գետակը: Ունի 1496-ին շինուած բերդ մը: Մերձակայ չորս վանքերէն Ամրտօլուի մօտ երկու սրբավայրերը (Սուրբ Սիմէոն եւ Սուրբ Կղեմէս) մզկիթի վերածուած են: Արեւելք գին՝ Սուրբ Գէորգ լեռան դաղաթը՝ Պարսից Խաներու ժամանակէն մնացած Տէրաթլան չէնքէն կարելի է դիտել Բաղէշի համայնապատկերը:

Ընդհանուր կուսակալութեան 400,000 բնակիչներուն ստուար մեծամասնութիւնը Քիւրտ է՝ որ դարերէ ի վեր հարստահարած ե ջարդած է տեղւոյն ամէնէն կենսունակ տարրը՝ Հայը, Աղէտի տարին՝ 1140 տուն (7000 հոգին լուսաւորչական, 300-ը բողոքական եւ 900-ը պանդուխտ): Կուսակալն էր Ապտիլ-Խալիք՝ որուն գործած հրէշութիւնները չափ ու սահման չեն ունեցած: Քաղաքին եւ շրջակայ 70-է աւելի գիւղերուն Հայութիւնն ամբողջ ջարդուած է, մեծ մասամբ՝ քաղքէն քիչ հեռու «Արապի-Կարմունճ» կոչուած տեղը, կիներ՝ լլկուած, այրեր՝ կծիկ կծիկ բրածեծ, դաշունահար եւ տապաւաճար, երախաներ՝ ողջ ողջ դետամոյն, իսկ եկեղեցւոյ պաշտօնեաներ՝ նշաւակ եպիսկոպի անարգանաց, նախքան իրենց նահատակումը:

Կառավարութենէն քաջալերուած Քիւրտ տարրը մանաւանդ երեւան եկաւ իր ցեղային բարբարիկ բնազդներուն գերազրգումով, անխնայ կոտորելով իր դարաւոր դրացին՝ Հայը, յապուրակի տիրանալու տենչանօք անոր տունին ու տեղին, լուծքին ու նախիրին, սոկիներուն ու նուիրական սրբութեանց, նաեւ անոր խորտակի հարսերուն:

Բաղէշ եւս Մշոյ նման չճանչցաւ տեղահանութիւնն ու անոր յծորդ արհաւիրքներն ու երկարաձգուած հոգեւարքները. բայց Հայուհիներէ մաս մը բռնադատուեցաւ իսլամանալու բռնութեան տակ եւ առ ահի: Աղնուատոհմ եւ Թարմազեղ հարիւրաւոր հարսունք ու կուսանք տարուեցան «Հարէմ»ի զարդ կազմելու համար, ուրիշներ ալ (թիւով 300) լեցուեցան զօրանոցի վերածուած տաճարին մէջ, Թուրք բանակին անասնոցած շարքերուն կրից ի սպաս, ապա միահաղոյն թունաւորուեցան ու զէնուեցան, սպաներն ավերողիտեան ախտով(!) վարակած ըլլալու քրէիքուր յանցանօք, հրէշ հրամանատար Մահմուտ Քեամիլ փաշայի կարգադրութեամբ: Շնական ջաղաքականութեան մը լրումն էր այս. Հայ պատիւը ցեխերու մէջ թաթխելէ վերջ՝ նորէն Հայէն լուծել վրէժին, ի փոստ Օսմանեան բանակի ախտածէս ներկայացուցիչներուն:

Բաղէշ ալ ունեցաւ իր կախաղանները՝ որոնց վրայ տարապարտուց բարձրացողներէն յիշենք Գեղամ Մ. Աստուրեան եւ Արմենակ Յոխիկեան երիտասարդները:

Վանքերն էին «Ամրտօլու (Ամրդուոյ) Սուրբ Յովհաննէս» քաղաքին մէջ, «Գոմաց», «Ավելիսու» եւ «Ոնդրակատար» — վերջին երեքը՝ Սուրբ Աստուածածին անուանակոչութեամբ: Նոյնքան ալ եկեղեցի. — Կարմրակ

Սուրբ Նշան, Հինգ Խորան և Սուրբ Գէորգ, որոնց թանկարժէք հնութիւններուն փշո՛ւրն իսկ չթողուցին վանտալեան թաթեր:

Առաջնորդն էր, 1911-էն ի վեր

Սուրբն Նշանը վարդապետ Գալէմեան.— Մնած է Քուչնա (Արարիկ) 1886-ին, աշխարհական անուամբ Պօղոս: Պրուսայի շերամաբուծական վարժարանը յաճախելէ վերջ, 1902 Նոյեմբերին Արմաշու զպրեկանքը մտնելով՝ 1909-ին վարդապետ կը ձեռնադրուի Ստեփանոս Եպիսկոպոս Յովակիմեանէ: Պահ մը քարոզիչ Սկիւտարու Սուրբ Կարապետ եկեղեցոյն և կրօնուսոյց Ղալաթիոյ Կեղրոնականի՝ 1910-ին, որմէ յետոյ կը մեկնի իր թեմը, բոլորելով քառամեայ բարեք պաշտօնավարութիւն մը:

22 Յունիս 1915-ին, արիւնոտչտ կուսակալն իր տունը կը հրաւիրէ այս երիտասարդ վառվռուն եկեղեցականը, նաև Աւետարանական Հայոց Հովիւ Վերապատուելի Խ. Վարդանեանն ու ազգային դործիչ Արմենակ Յովսիկեանը, որպէս թէ քաղաքին անդորրութեանը մասին խորհրդակցութիւն մը կատարելու մտադրութեամբ: Այս երեքը հոն հասնելնուն միայն կ'անդրադառնան թէ ծուղակն են ինկած: Իրենց անօգուտ ողորումներուն և բուռն բողոքումներուն կը յաջորդէ ըրիտ կապանքը զստակներնուն. ապա կը տարուին ամայի վայր մը և կը նահատակուին չարաչար:

Նախափկայ երբեակ զոհերէն վերջ՝ կարգը կու գայ մեթոտիկ սպանութեանը շատ մը ծանօթ ազգայնոց, որոնց շարքին են տեղւոյն վարժարանին տեսուչ Գէորգ Մարգարեանի, դարձեալ ուսուցիչներ՝ Մելքոն Գաթրեւոյնի, Հայկ Ամիրխանեան, փաստարան Մուրատ Էւայն:

Իրբև առևտրական մեծ կեղրոն ներքին զաւառներու, Կարինէն վերջ երկրորդ կուգար Բաղէշ՝ ուր նորէն Հայերն էին գերադաս, իրենց ընդարձակ դործառնութիւններով: Այսօր ոչ ևս են անոնք: Ահա անուններնին.— 2 Աղաճանեան, 3 Անթոյեան, Ապրահամեան Աղար, 3 Աստուրեան, 5 Բաղդուհան, 2 Գասպարեան, 3 Գարօղլանեան, 5 Գրգոյեան (մին՝ ձէրճիս «Մէճլիսը Իտարէ»ի անդամ), 5 Դուրեան, Զօղանեան, 4 Էսկիճեան, 3 Ժամխարեան, 2 Խաղիսպեան, 2 Խալմանուկեան (մին՝ Կարապետ «Մէճլիսը Իտարէ»ի անդամ), 5 Մաթոսեան, 3 Մկրտիչեան, 4 Յովսիկեան, (մին՝ Սիմոն «Մէճլիսը Իտարէ»ի անդամ), Շողիկեան, 2 Զուլաճեան, 3 Պաղարեան, 2 Պապոյեան, 2 Պամաճեան, 3 Պատիկեան, 3 Տապաղեան, 2 Փամպուքճեան, 2 Քէնտէրեան, (մին Սարգիս՝ փաստարան), 3 Քիւրքճեան, 2 Քնտոյեան (համադումար՝ 78 հոգի, առանց հաշուելու երկրորդականները):

Քաղաքին չորս սրբավայրերուն մէջ պաշտօնավարող հոգեւորականներն ալ նահատակուած են սուրով ու սակրով, նախապէս չարաչար տանջուելէ ետք: Ահաւասիկ ատոնց անունները.

Ղեւոնդ Քահանայ Պաշխալուցի.— 68 տարու, բնիկ, աշխարհական անուամբ Ումրատ, ուսած Թոթիկի դպրոցը, ձեռնադրուած Սուրբ Գէորգ եկեղեցւոյն վրայ, ի վանա Նարեկայ, Խաչատուր Կաթողիկոսէ 20 Ապրիլ 1894-ին: Եղիշէ Եպիսկոպոս Զիլինկիրեանի առաջնորդութեան տակ, անդամակցած կրօնական Ժողովի, նաև կրօնուսոյց՝ Բաղէշի բողոքական որբանոցին լուսաւորչական սանուց: 1898-ին գաղթած Իզմիր՝ որուն թեմերը պաշտօնավարած 9 տարիներ, յետոյ վերադարձած Բաղէշ:

Մովսէս Քահանայ Կիլիկեցի.— Մնած է Խոյսիկ 1860-ին, աշխարհական անուամբ Ստեփան, ուսուցիչ, 1903-ին ձեռնադրուած Սահակ Եպիսկոպոս Բաղրեւանդեանէ: Երկու տարի իր ծննդավայրը քահանայադործելէ վերջ՝ անցած Բաղէշի Սուրբ Գէորգ եկեղեցին, որ կը գտնուի Աւեր-Մէյտան Հայնոցին մէջ:

Յակոբ Քահանայ Տէր-Յակոբեան.— Ծնած 1833-ին, Լաթար գիւղ (Պուլանրդ), աշխարհական անուամբ նոյն, 1866-ին ձեռնադրուած Զաբարիա Լպիսկոպոսէ՝ Խնուսի Եազիս գիւղի Եկեղեցւոյն վրայ: Պոյին դադարձ Զէրբէօյ քահանայապօրծելէ ետք, անցած է Թաթար — Փաղարճրդ (Պուրկարիա), այնուհետեւ՝ Բաղէշ:

Յակոբ Քահանայ Տէր-Յակոբեան.— Ծնած է 1860-ին Քիզան գիւղ (Սղերդ), աշխարհական անուամբ նոյն, 1886-ին վան ձեռնադրուած Պօղոս արքեպիսկոպոս Մելիքեանէ: Ծննդավայրին և շրջակայ գիւղերուն հովու-թիւն ընելէ ետք, Երբ Համբուեան Զարդերուն հետեւանօք այդ տեղերը կ'ա-մայանան և իր գիւղն ալ նոր երէց մը կ'ունենայ, կ'անցնի Բաղէշ և իրը այ-րիացեալ քահանայ՝ կը մեկուսանայ Խնդրակատարի վանքը:

Խաչատուր Քահանայ Տէր-Յակոբեան.— Ծնած 1871-ին Լաթար գիւղ (Պուլանրդ), աշխարհական անուամբ Ալեքսան, 1900-ին ձեռնադրուած Յով-սէփ Լպիսկոպոս Ռչաունիէ: Պանդխտած է և քահանայապօրծած Աղ-Շէհի և Պիլա, հուսկ ուրեմն Բաղէշի Սուրբ Կարմրակ Եկեղեցին:

Գէորգ Բահանայ Տէր-Գէորգեան.— Ծնած 1854-ին Մզրէ գիւղ, աշ-խարհական անուամբ Մելքոն, ուսումը ստացած Բաղէշ, 1891-ին Աղթամար ձեռնադրուած Խաչատուր Կաթողիկոսէ: Ատեն մը իր ծննդավայրը հովուելէ վերջ՝ պաշտօնավարած Բաղէշ քաղաքի Մապրկոբ թաղի Սուրբ Սարգիս Եկեղեցին:

Մկրտիչ Բահանայ Տէր-Գէորգեան.— Եղբայր Տէր Գէորգի, ծնած 1857-ին, աշխարհական անուամբ նոյն, 1901-ին ձեռնադրուած Սահակ Լպիս-կոպոսէ: Կը հովուէր Հինգ Խորան կոչուած թաղը:

Գոմաց վանքի երէցն էր

Յարութիւն Քահանայ Տէր-Պետրոսեան.— Ծնած 1884-ին Սիշէո (Սղերդ), աշխարհական անուամբ նոյն, 1908-ին ձեռնադրուած Յովսէփ Լ-պիսկոպոսէ՝ ծննդավայրին Սուրբ Սիմոն Եկեղեցւոյն վրայ, ուր քանի մը տարի քահանայապօրծելէ ետք՝ այս մեկնաստանը քաջուած է:

Բաղէշի Աւետարանական Հայոց հովիւն էր

Վերապատուելի Խաչատուր Վարդանեան.— Ծնած է 1863-ին Տալու-րիկի Էլու-Տուն գիւղը: Նախնական կրթութիւնը կ'ստանայ Մուշ, ապա Բա-ղէշի բարձրագոյն վարժարանի ուսումը լրացնելով՝ կ'անցնի Խարբերդ, ու-րուն Գօլէճէն ընթացաւարտ կ'ըլլէ 1891-ին և տարի մը կը պաշտօնավարէ Պուլանրդ իրր քարոյիչ, իսկ 1895-էն մինչև Աղէտի տարին ի Բաղէշ, վայե-լելով քաջ բեմասացի, բազմաթիւն դաստիարակի և ազգային դորձոց և-ռանդուն վարիչի համբաւ: «Մէճլիսը Իտարէ»ի անգամ գոյով՝ մշտական յա-րարերութեան մէջ էր կառավարութեան հետ, և 10 տարիէ ի վեր նոյն շրը-ջանի Հայ-Քրտական շարժմանց ու Զարդերուն ատեն ներկայացած էր իրր անվճառ բողոքարկու:

Իր եղերական վախճանը տե՛ս ատաշնորդ Սուրէն ծայրագոյն վարդա-պետի կենսագրութեանը ներքև:

Տեղւոյս նահատակ հոգեւորականաց շարքին է նաև

Պատուելի Սարգիս Երեցեան.— Ծնած է 1860-ին Եօնճալու, քարոյիչ և կրթական վստասկաւոր:

ՀԱՅ ԳԻՒՂՈՐԷՔ ԲԱՂԷՇԻ

Ահա առաջին Բնագիշի շրջանային 79 գիւղերը՝ որոնց մէջ սպանդի և աւերման տուածները ներկայացուցան նոր վանտալներու անողոր ձեռքերով, և որոնք կը բաժնուին Հետտայ շրջաններուն .

Ա. — ԱԽԼԱԹ կամ ԽԼԱԹ (Խոտոտունիք — Բզնունիք) :

Բ. — ՏԱՏԻԿ :

Գ. — ԿԻՒԶԱԼ — ՏԷՐԷ (Աղնուածոր, Աղձնիք նահանգի հին պաւսանիքէն մին, որ Բաղէշի հիւսիս-արեւելիկողմը՝ երեքուկէս ժամ հեռու դաշտ մըն է ընդարձակ) :

Այս երեք շրջանները կը կազմեն ՍԱԼՆՈՅ ՁՈՐը : Իսկ ամբողջ Բաղէշի նահանգին Հայ գիւղորէից Համապումարը 500-էն աւելի է : (Գիւղերուն տունթերակից թուանշանները տուններուն Համարները կը ցուցնեն . մէն մի տուն բաղմապատկելի է 5-էն մինչև 10-ով, գիւղին քանի՛ շունչ ունենալը գիտնալու համար . և այս՝ կիրարկելի է բովանդակ Տաճկահայաստանի բնակչութեան : Բոլորն ալ ունէին իրենց սրբալայրերը, ոմանք նոյնիսկ կրկին, բացի աստղանիշ կրողներէն) : Աւելորդ է ըսել թէ անոնց բոլոր հողերաւիանները նահատակուած են ոճրապարտ ձեռքերով :

(Շար. 5)

